

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

18 փետրվարի 2016 թ.

N 30-Ն

### Հ Ր Ա Մ Ա Ն

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 268-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

#### Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում գրանցված անասնաբուժական դեղամիջոցների ցանկը հաստատելու մասին» N 268-Ն հրամանով հաստատված հավելվածը լրացնել նոր՝ 109-րդ, 110-րդ, 111-րդ և 112-րդ կետերով, հետևյալ բովանդակությամբ.

109.	Թռչունների ինֆեկցիոն բրոնխիտ, Նյու-Քասլ և ձվատվության նվազեցման համախտանիշ հիվանդությունների նկատմամբ ակտիվազրկված Վաքս:օն ԻԲ.ՆԴ. ԵԴՍ ինակ (Vaxx:on IB.ND.EDS Inac) պատվաստանյութ	Իտալիա	«ԻԶՕ Ս.Ն.Լ.» կազմակերպություն
110.	Թռչունների ռեովիրուս վարակի, ինֆեկցիոն բրոնխիտ, Գամբոբո և Նյու-Քասլ հիվանդությունների նկատմամբ ակտիվազրկված Վաքս:օն ՌԵՕ.ԻԲ.ԻԲԴ.ՆԴ ինակ (Vaxx:on REO.IB.IBD.ND Inac) պատվաստանյութ	Իտալիա	«ԻԶՕ Ս.Ն.Լ.» կազմակերպություն
111.	Թռչունների ինֆեկցիոն բրոնխիտ հիվանդության նկատմամբ չոր Վաքս:օն ԻԲ Հ120 (Vaxx:on IB H120) պատվաստանյութ	Իտալիա	«ԻԶՕ Ս.Ն.Լ.» կազմակերպություն
112.	Թռչունների ինֆեկցիոն բրոնխիտ և Նյու-Քասլ հիվանդությունների նկատմամբ կենդանի չոր Վաքս:օն ՑՀԲ 28/86 (Vaxx:on CHB 28/86) պատվաստանյութ	Իտալիա	«ԻԶՕ Ս.Ն.Լ.» կազմակերպություն

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախարար՝

Ս. Կարապետյան